ԿԱՐԵՆ ԲԱՅՐԱՄՅԱՆ
Պատմության եւ մշակույթի հուշարձանների
պահպանության գործակալություն,
ՀՀ Մշակույթի նախարարություն

ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՎԱՆԴԸ ՁՎԱՐԹՆՈՑ ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՅՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանում հնությունների պահպանության սկիզբը դրվել է դեռեւս Առաջին Հանրապետության տարիներին, երբ խորհրդարանն իր գործունեության ավարտից ամիսներ առաջ՝ 1920 թ. հուլիսի 7-ին, հասցրեց ընդունել հնությունների պահպանության կոմիտե կազմակերպելու մասին օրենքը[1]: Կոմիտեն գտնվելու էր Հանրային կրթության եւ արվեստի նախարարության կազմում: Օրենքում հաստատվում էր նաեւ կոմիտեի կազմը, որի անդամներ էին ակադ. Ալ. Թամանյանը, Գարեգին եպս. Հովսեփյանը եւ Աշխարհբեկ Քալանթարը՝ որպես հանրային կրթության եւ արվեստի նախարարության հնության պահպանության բաժնի վարիչ[2]: Սակայն սոցիալ-տնտեսական ու քաղաքական այն ծանր իրավիճակը, որում հայտնվել էր Հայաստանի Առաջին Հանրապետությունը, թույլ չտվեց զարգացնել այդ ուղղությամբ ձեռնարկված աշխատանքները: Հնագիտական եւ գեղարվեստական արժեք ներկայացնող հուշարձանների պահպանության գործը կարեւորվեց նաեւ խորհրդային իշխանության առաջին տարիներին, երբ ստեղծված դժվարին պայմաններում տառացիորեն ամեն ինչ հարկավոր էր սկսել զրոյից: Այդ ուղղությամբ առաջին ձեռնարկումը 1921 թ. հունվարի 8-ին ՀՍԽՀ լուսավորության ժողկոմատի «Գեղարվեստական եւ հնագիտական արժեք ներկայացնող հուշարձանների պահպանության մասին» հրամանն էր: Նրանում սահմանվում էր՝ լուսժողկոմատին առընթեր ստեղծել հնությունների եւ արվեստի պահպանության հանձնաժողով[3]:

---

[1] Տեմ «Հայաստանի հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.)», Երեւան, 1998, էջ 372:

[2] Անդ, էջ 373:

[3] Տեմ «ՀՍԽՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու», պր. 1, 1920 թ. նոյեմբեր 29-1921 թ. փետրվարի 18, Էջմիածին, 1921, էջ 57:

Լուսժողկոմատի հրամանից երկու տարի անց՝ 1923 թ. դեկտեմբերի 18-ին, հրապարակվում է «Հնությունների պահպանության մասին» Հայաստանի կառավարության՝ ժողկոմխորհի դեկրետը, որի առաջին եւ կարեւոր կետերից մեկը Հայաստանի տարածքում գտնվող հնագիտական եւ գեղարվեստական արժեք ներկայացնող հուշարձանների անձեռնմխելիության կարգավիճակի հաստատումն էր[4]*: Դեկրետում հնագիտական եւ գեղարվեստական արժեք ներկայացնող հուշարձանների պահպանության վերահսկողությունը դրվում էր նոր կազմակերպվող՝ հնությունների պահպանության կոմիտեի վրա՝ նախագահությամբ Ալ. Թամանյանի, անդամներն էին ճարտարապետ Թ. Թորամանյանը, նկարիչ Մ. Սարյանը, գիտնականներ Ա. Մելիք-Քալանթարը, Ս. Տեր-Հակոբյանը*[5]*: 1925 թ. կոմիտեն ընդլայնվում է նոր անդամներով՝ Ն. Բունիաթյան, Բ. Հասան-Ջալալյան, Գ. Ասատուր, Գ. Կեւոնյան, Ստ. Լիսիցյան, ավելի ուշ՝ Ե. Շահազիզ, Ս. Տեր-Աբրահամյան, Տարագրոս, Կ. Ղաֆադարյան, Ս. Բարխուդարյան, Ն. Տոկարսկի եւ ուրիշներ:*

Հնությունների պահպանության նորաստեղծ կոմիտեի առաջին գործերից մեկը Զվարթնոց պատմահնագիտական վայրի[6] *ստեղծման աշխատանքների ձեռնարկումն էր, թեպետ վերջինիս կայացումն ու զարգացումը տասնամյակների պատմություն ունի: Ակներեւ է նաեւ, որ Զվարթնոցի պատմահնագիտական վայրի, որպես մեր պատմամշակութային ժառանգության հիմնական կոթողներից մեկի, կայացման ու զարգացման գործում մեծ ավանդ են ունեցել հայ մշակույթի պահպանության խնդրով զբաղված շատ երախտավորներ: Դեռեւս 1900 թ. մայիսին, Ռուսաստանի կայսերական հնագիտական հանձնաժողովի թույլտվությամբ, Զվարթնոցի պեղումներին ձեռնամուխ եղավ Խաչիկ վարդապետ Դադյանը: Չորս տարվա ընթացքում արշավախմբին հաջողվեց հողից ու շինարարական աղբից մաքրել տաճարի ավերակներին հարող ողջ տարածքը, որի «շնորհիվ գիտության համար եւ բոլորին ի տես բացվեցին Զվարթնոց տաճարի եւ նրա հարավ-արեւմտյան կողմը գտնվող Ներսես Գ. Կաթողիկոսի պա-*

---

[4] Տես ԲՀԱ, Երեւան, 1974, էջ 162 (Культурное строительство Советской Армении (1920-1940 гг.) докунемты и материалы).

[5] Տես **Ռ. Կ. Միրզախանյան**, Խորհրդային Հայաստանի մշակույթի ձեւավորման առաջին քայլերը (1920 թ., դեկտեմբեր-1921 թ. փետրվար), ԼՀԳ, 2015, թիվ 1, էջ 316:

[6] Հուշարձանների պահպանության մասին գործող օրենսդրությունում սույն արտահայտությունը ներկայացված է հետեւյալ ձեւակերպմամբ. «Հուշարձանի տարածքն իր զբաղեցրած եւ պատմականորեն ու գործնական առումով դրա հետ կապված եւ սահմանված կարգով առանձնացված հողատարածքն է»:

լատի մնացորդները: Այդ ժամանակից ի վեր Զվարթոցը, որպես հին հայկական ճարտարապետության մեծագույն հուշարձան, դարձավ Հայաստանի տեսարժան վայրերից մեկը»,- գրում է հայ ճարտարապետության նշանավոր գիտակ, պատմաբան, ակադ. Վ. Հարությունյանը[7]*:*

Զվարթնոց պատմահնագիտական վայրի կայացման խնդրում հիմնական ծանրությունն ու պատասխանատվությունը կրում էր Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեն, որի աշխատանքների հիմնական կազմակերպիչը, հետագայում նաեւ ղեկավարը եւ գիտական քարտուղարը հայագիտության երախտավոր Աշխարհբեկ Քալանթարն էր[8]*:*

Աշխարհբեկ Քալանթարը ծնվել է 1884 թ. փետրվարի 11-ին Լոռու Արդվի գյուղում՝ Լորիս Մելիք Քալանթարի եւ Արղության (մայրական կողմից) ազնվական ընտանիքում: 1905 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1907 թ.՝ Թիֆլիսի գիմնազիան: Նույն թվականին ընդունվել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի պատմա-լեզվաբանական բաժինը, որը գերազանցությամբ ավարտել է 1911 թ.: Սանկտ Պետերբուրգում աշակերտել է հայագիտության երախտավոր Նիկողայոս Մառին: Ուսանելու տարիներին ներգրավվել է Անիում պեղումներ կատարող արշավախմբում: 1912-1913 թթ. Կայսերական ակադեմիայի կողմից գործուղվել է Իմիրզեկ (Վանստան), ապա Սուրմալուի գավառ՝ ուսումնասիրելու եզդիների ազգագրությունը եւ Զորի բազիլիկան, հետագայում՝ նաեւ Լոռի: 1912 թ. ընտրվել է Սանկտ Պետերբուրգի հնագիտական ինստիտուտի խսկական անդամ, իսկ 1914 թվականին՝ Կայսերական հնագիտական ընկերության անդամ: Կայսերական ակադեմիայի որոշմամբ՝ նշանակվել է Սանկտ Պետերբուրգի Ասիական թանգարանի վարիչ: Նույն թվականին իր ուսուցիչ Մառը նրան է վստահել Անիի պեղումների 13-րդ արշավախմբի ղեկավարումը: Հիշարժան են նաեւ 1917 թ., Ա. Քալանթարի եւ Ն. Ադոնցի մասնակցությամբ, Վանի հնագիտական երկրորդ արշավախմբի հայտնաբերած ուրարտական արձանագրությունները: Աշխարհբեկ Քալանթարը ակտիվ մասնակցություն է ունեցել Առաջին հա-

---

[7] Տես **Վ. Հարությունյան**, Զվարթնոց, Երեւան, 1947, էջ 7:

[8] Ա. Քալանթարի տպագիր եւ անտիպ գիտական աշխատությունների համահավաքը կազմվել եւ հրատարակվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի կողմից՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Քալանթարյանի խմբագրությամբ (տես «Հայաստան՝ Քարե դարից միջնադար», Երեւան, 2007): Ա. Քալանթարի գիտական վաստակը ամփոփված է նաեւ անգլերեն լեզվով լույս տեսած գրքերում ("Armenia: From the Stone Age to the Middle Ages", Paris, 1994. "The Medieval Inscriptions of Vanstan, Armenia", Paris, 1999. "Materials on Armenian and Urartian History", Paris, 2003):

մաշխարհային պատերազմի տարիներին կազմակերպված կամավորական շարժմանը՝ լինելով մեծ հայդուկապետ Անդրանիկ Օզանյանի թարգմանիչն ու խորհրդականը, ունեցել է փոխգնդապետի զինվորական կոչում. «Լույսը նոր էր բացվել, երբ դիվիզիայի հրամանատար Նազարբեկյանը յուր շքախմբով կանգնեց Անդրանիկի առջեւ: Պահակապետը ...շտապեց արթնացնել Անդրանիկին, որ նոր էր գլուխը բարձին դրել: Նա խկույն ոտքի ելավ եւ զորավար Նազարբեկյանին հանդիպեց վրանի շեմին, նրանք գրկախառնվեցին: Անմիջապես որպես թարգման հրավիրվեց Ա. Քալանթարը»,- նշվում էր ժամանակակիցներից մեկի հուշերում[9]:

1918 թվականին, Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանի հանձնարարությամբ, Ա. Քալանթարը կազմակերպել է մոտ 6000 հնագիտական իրերի տեղափոխումը Անիից, որոնք այժմ պահվում են Հայաստանի պատմության թանգարանում: 1921 թ., Քալանթարի ջանքերի շնորհիվ, Թիֆլիսից Երեւան է փոխադրվել նշանավոր Մշո Առաքելոց վանքի դուռը, ինչպես նաեւ Անիի հնադարանի դրամական ժողովածուն, հայերեն արժեքավոր ձեռագրեր: Ա. Քալանթարը մահացել է աքսորում ենթադրաբար 1942 թ. հունիսին:

Ներկա հրապարակումը նպատակ ունի արխիվային վավերագրերի հիման վրա ցույց տալ Աշխարհբեկ Քալանթարի ունեցած ավանդը Զվարթնոց պատմահնա-գիտական վայրի կայացման գործում:

Հնագիտական վայրի պահպանության եւ այնուհետեւ նրա կայացման համար առաջին հերթին հարկավոր էր պարզել Զվարթնոց պատմահնագիտական վայրի սահմանները: Այս նպատակով Աշխարհբեկ Քալանթարի ջանքերով 1923 թ. հոկտեմբերին ստեղծվում է առանձին հանձնաժողով, որի կազմում էին Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, Թորոս Թորամանյանը եւ ուրիշներ: Նրանք հոկտեմբերի 17-ին ՀՍԽՀ լուսժողկոմատին ուղղված առաջին իսկ զեկուցագրում մանրագնին ներկայացնում են ուսումնասիրության նպատակները ու առաջարկները, որոնք վերաբերում էին ինչպես անմիջական հնագիտական վայրի սահմաններին, այնպես էլ Զվարթնոց հնագիտական արգելոցը պատմամշակութային օջախի վերածելուն: Հանձնաժողովի եզրակացություններում հնավայրի տարածքի վերգետնյա գտածոների ժամանակագրության մասին մասնավորապես ասվում էր. «Համաձայն ձեր՝ հոկտեմբերի 7-ի հրամանի, հանձնաժողովս հոկտեմբերի 12-ին, Զվարթնոցի շուրջը գտնվող հնագիտական վայրի

---

[9] Տես **Վ. Հովակիմյան,** Դժվարին տարիներ, Երեւան, 1988, էջ 82:

ամբողջ տարածությունը հենց տեղի վրա դիտեց եւ քննեց հետագա երեք նիստերում յուր դիտողության արդյունքները. հիշված տարածության վրա մինչեւ այժմ գտնված հնագիտական նյութերը հույն-հռոմեական եւ հայկական էին»[10]*: Ավելին, հանձնաժողովը կատարում է ուշագրավ մի դիտարկում. «Պատմական տեղեկություններն ու արձանագրությունները եւ նոր ուսումնասիրությունները նկատի առնելով՝ հանձնաժողովը գտավ, որ պատմական Կայնոպոլիս - Վաղարշապատ քաղաքի միակ հավանական տեղը Զվարթնոցի շրջակա տարածությունն է, որը եզերող միալար ոչ բնական բլրաշարքերը եւ սրանց մեջ ընկած տարածությունը ծածկում են հին Հայաստանի եւ նրա հետ առնչություն ունեցող ժողովուրդների քաղաքական եւ քաղաքակրթական կյանքի խիստ կարեւոր մնացորդները», - ասվում էր հանձնաժողովի եզրակացության մեջ (անդ):*

Հանձնաժողովի եզրակացությունը միաժամանակ ցույց է տալիս, որ Զվարթնոց հնագիտական վայրի սահմանների մասին եղած պատկերացումներն ավելին էին, քան Զվարթնոցի տաճարին անմիջական հարող տարածքները. «Սրանով հանձնաժողովս հաղորդելով յուր եզրակացությունը,- ասվում էր հանձնաժողովի եզրակացության մեջ,- խնդրում է շրջակա տարածությունը (Արեւելքից III խորհ. տնտեսությունում գտնվող) հին առուն, հարավից՝ Վարմազյար (Արեւաշատ)-Զոբանքյարա տանող ճանապարհը, Արեւմուտքից նույն ճանապարհը [դուեր տանող] գլխով դեպի Հռիփսիմեի Լենինյան ջրանցք... եւ Հյուսիսից Հնձանափոս կոչվող տարածությունից տալ՝ համարել հնագիտական վայր եւ ազատ ցուցանել հողամշակական օգտագործումից: Պարտք ենք համարում հայտնել նաեւ, որ հիշված տարածության վրա խիստ աննշան էին կազմում մի քանի փոքր մշակելի տարածությունները, որոնց մշակությունը կարելի է տրամադրել Զվարթնոցի վարչությանը, որպեսզի... տնտեսությունն օժանդակի Զվարթնոց հնադարանի պահպանության եւ զարգացման աշխատանքներին»,- նշվում էր եզրակացության մեջ (անդ):

Իսկ թե ինչո՞ւ էր հանձնաժողովը կայացրել այս եզրակացությունը, պարզ է դառնում Թ. Թորամանյանի՝ 1924 թ. ապրիլի 17-ին Աշխարհբեկ Քալանթարին ուղղված հետեւյալ զեկուցագրից. «Հարգելի ընկ. Աշխարհբեկ: Զվարթնոցի եւ մոտակա գյուղերի մասին ղրկածս տեղեկագիրը ստացած կլինեք: Ձեր տոմսակը ստացա: Ես բնավ չեմ կարող հաշտվել Զվարթնոցում որբեր ապրեցնելու կամ աշխատեցնելու մտքե-

[10] Հայաստանի ազգային արխիվ, այսուհետ՝ ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 9, թ. 2: Ստորեւ բոլոր հղումները կնշվեն շարադրանքում:

րին: Երանի կլիներ կալվածքը միանգամայն հատկացնեին Զվարթնոցին, որի եկամուտով հնար լիներ որոշ չինարարական աշխատանք կատարել: Խելքս չի կտրում, որ Լուսժողկոմատը նյութապես բավարարե Զվարթնոցի կարիքներին» (անդ, թ. 9): Փաստորեն սկզբում Լուսժողկոմատը մտադրվել է Զվարթնոցին հարակից տարածքները օգտագործել որբերի համար աշխատանքային ճամբար կառուցելու նպատակով, որին սակայն դեմ էր հանձնաժողովը, առավել եւս՝ նրա աշխատանքները համակարգող Աշխարհբեկ Քալանթարը: Ուստի, անհետաձգելի համարելով այս գործի կազմակերպումը, Աշխարհբեկ Քալանթարը գրությամբ հանձնարարում է Թորամանյանին շարունակել հնագիտական վայրի ուսումնասիրությունը, որին ի պատասխան՝ անվանի ճարտարապետը հայտնում է, որ ինքը եւս անհետաձգելի է համարում շրջաններում գոյություն ունեցող հնությունների չափագրումն ու մանրամասն նկարագրությունը. «Անհետաձգելի եմ համարում նոր շրջածս գյուղերի հնությունները չափագրել եւ մանրամասն նկարագրել, եթե չկարողանամ լուսանկարել: Զատկից հետո ուզում եմ գնալ, սակայն առանց օգնականի չեմ կարող մի բան անել, պետք է անպայման մի մարդ տանեմ հետս օրավարձով, բայց ումի՞ց ստանալ, խնդրում եմ այս մասին մտածեք եւ գրեցեք ինձ շուտով, որպեսզի չուշանամ: Ցանկալի է իմանալ, թե ինչ եղավ ֆոնդի հաստատության գործը» ,- հայտնում էր Թորամանյանը (անդ):

Աշխարհբեկ Քալանթարի՝ Զվարթնոց հնագիտական վայրի կայացմանն ուղղված աշխատանքերի հետեւողականության արդյունքում ՀՍԽՀ լուսժողկոմատի՝ 1924 թ. ապրիլի 17-ի հրամանով Զվարթնոց հնագիտական վայրը հանձնվեց Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեին (անդ, թ. 4): Առանձին գրությամբ նույն օրը Աշխարհբեկ Քալանթարը այդ լուրը հաղորդեց Թորոս Թորամանյանին: Նրանում արդեն ոչ միայն կազմակերպչական բնույթի հորդոր էր, այլեւ աշխատանքային հստակ առաջարկ: Արխիվային փաստաթուղթն այդպես էլ վերնագրված է. «Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի գիտնական քարտուղար Աշխարհբեկ Քալանթարի գրությունը կոմիտեի անդամ Թ. Թորամանյանին՝ Զվարթնոցի հնագիտական վայրի խնդիրների վերաբերյալ: 17 ապրիլի 1924 թ., Երեւան»: Փաստաթղթում ասվում էր. «Զվարթնոցի ներկա դրությանը վերաբերող Ձեր ուղարկած զեկուցման հետեւանքով Լուսժողկոմատի կողմից արվեցին հետեւյալ կարգադրությունները.

ա/ Թ. 141 հրամանով Զվարթնոցը հանձնվում է ՀՀՊ կոմիտեին, հնագիտական վայրի սահմանները որոշելու համար կազմվում է հանձնաժողով՝

Ձեր, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի եւ իմ անդամակցությամբ: Այդ վայրի կառավարիչ Խաչիկ վարդապետը ազատ է կացուցվում իր պաշտոնից:

բ/ Զվարթնոցի նախկին կառավարիչ Խաչիկ վարդապետին թ. 2229 գրությամբ կարգադրվեց անմիջապես հանձնել կոմիտեի ներկայացուցչին՝ Զվարթնոց հնագիտական վայրն իր բոլոր շենքերով եւ թանգարանում պահվող բոլոր մնացորդները՝ մանրամասն ցուցակագրությամբ:

Հանձնման եւ ընդունման արձանագրության իսկականը նա պարտավորվել է ուղարկել կոմխարիատ, իսկ վավերացրած երկու պատճենից մեկը հանձնելու Ձեզ՝ իբրեւ կոմիտեի ներկայացուցչի:

Բացի այդ, Լուսժողկոմատի հատուկ մակագրությամբ առաջարկվում է Ձեզ՝ իբրեւ կոմիտեի ներկայացուցչի, Խաչիկ վարդապետից ընդունելով Զվարթնոցի «ամբողջ ինչքը, կատարել խիստ քննություն՝ պարզելու հնությունների փչացման թե՛ պատճառը եւ թե՛ մեղավորներին՝ հանձնելու համար վերջիններիս դատարանին»:

Ինչ վերաբերում է Զվարթնոցի հնագիտական շենքը բնակչությունից բոլորովին ազատելու հարցին, Լուսժողկոմը ցանկություն հայտնեց, որ Դուք խոսեիք Էջմիածնի մանկատան վարիչ ընկ. Զարչուքչյանի հետ՝ որբեր չփոխադրել Զվարթնոց, թեկուզ եւ կարճ ժամանակով բնակեցնելու նպատակով: ՀՀՊ կոմիտեի գիտնական քարտուղար՝ Աշխարհբեկ Քալանթար» (անդ, թ. 6-7):

Կազմակերպչական բնույթի այս աշխատանքներից հետո, Աշխարհբեկ Քալանթարի անմիջական հանձնարարությամբ, Թորոս Թորամանյանի գլխավորած խումբն անմիջապես ձեռնամուխ է լինում Զվարթնոցի հնագիտական արժեք ներկայացնող վայրերի եւ գույքի ցուցակագրությանը: Բավականին պատասխանատու եւ կարեւորություն ներկայացնող մի աշխատանք, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ինչպես Առաջին Հանրապետության տարիներին, այնպես էլ խորհրդային իշխանության հաստատումից ի վեր, այդպիսի աշխատանք Զվարթնոցում չէր տարվել: Բնականաբար, այս ամենն առաջին հերթին կապված էր ֆինանսական միջոցների հետ: Ակնհայտ էր, որ Առաջին Հանրապետության տարիներին նմանատիպ աշխատանքների կազմակերպումը ուղղակի անհնար էր: Դրությունն առանձնապես չփոխվեց նաեւ խորհրդային իշխանության առաջին տարիներին:

Սուղ ֆինանսական պայմաններում խումբն անցնում է Զվարթնոց հնագիտական վայրի ցուցակագրությանը, թեպետ այստեղ էլ ծանր ու պատասխանատու աշխատանք էր սպասվում. առաջին իսկ ստուգումներից

պարզ է դառնում, որ հնագիտական կարեւորություն ներկայացնող շատ արժեքներ անհետացել էին, կամ եղած գույքի ցուցակագրությունը կատարվել էր խիստ թերի եւ ընդունված կանոններին անհամապատասխան: Խնդրի առնչությամբ Աշխարհբեկ Քալանթարին ուղղված առաջին իսկ զեկուցագրում Թորոս Թորոմանյանն այդ մասին ահազանգում է. «Պետք է գիտնալ, որ ցուցակը կազմված է բոլորովին անհամապատասխան հնագիտական օրենքներին, այնպես որ, ինձ մնում էր առանց առարկության ընդունել եղած վիճակին մեջ: Թե ինչե՞ր կային 1923 թ. մարտի 24-ից առաջ եւ ինչ պակասներ կարող էին լինել՝ փնտրել եւ քննել անօգուտ էր: Լուսժողկոմատի պահանջի համաձայն պիտի պատրաստեմ երեք օրինակ նույն ցուցակից եւ ուղարկեմ ի հաստատություն: Սակայն պետք է մտածել նոր եւ կանոնավոր ցուցակ պատրաստելու մասին: Երեւի մեր առաջիկա ժողովին խոսելիք կարեւոր հարցերից մեկը դա լինի» (անդ, թ. 10):

Ակհնայտ էր, որ թերի էին նաեւ հնագիտական վայրի պեղումների մասին արձանագրությունները եւ չէին համապատասխանում ընտրված նյութին: Ուստի, 1924 թ. ապրիլի 29-ին Աշխարհբեկ Քալանթարին ուղղված նամակում Թորոս Թորամանյանը կրկին անհանգստացած էր ստեղծված իրավիճակով. «Ձեր՝ 1924 թ. ապրիլի 28-ի գրությունը ստացա Բաղալի ձեռքով (Զվարթնոցի պահակ՝ Կ. Բ.): Ցուցակի անբավարար լինելը ես ինքս էլ գրել եմ նախորդ գրությունովս, սակայն նույն ցուցակից ավելին այլեւս չենք կարող ունենալ, միշեւ որ մենք ինքներս պատրաստենք: Հայր Խաչիկը ինքը, սկզբից ի վեր, ցուցակ չի ունեցել, ինստիտուտը ստացել է առանց ցուցակի, եւ իրենց ձեռքում գտնված ժամանակ անդամները ցուցակ կազմելու մասին հոգ չեն քաշել: Ինստիտուտից առնված ժամանակ նույնպես առանց ցուցակի պիտի լիներ, հայր Խաչիկի ասելով, եթե ինքը չպահանջեր պաշտոնական ցուցակով ստանալ, իսկ ինչ կվերաբերի մեր նոր կազմելիք մանրամասն ցուցակին, հայր Խաչիկը խոստանում է մանրամասն տեղեկություններ տալ՝ քաղելով իր օրագրություններից եւ հիշողություններից: Թեեւ չեմ կարծում, որ նրա օրագրությունները եւ հիշողությունները բավարար լինեն մեզ համար, որովհետեւ նա բոլորովին պեղման անփորձ, չի նշանակած եւ չափագրած այն զանազան չերտերը, որոնց ներքո գտնված են այս կամ այն առարկաները, հետեւաբար մենք պիտի ղեկավարվենք մասամբ մեր հասկացողությամբ եւ դատողությամբ՝ յուրաքանչյուր առարկայի ժամանակի եւ ոճի մասին»,- գրում էր Թորամանյանը (անդ, թ.10):

Անհանգստացնող էր նաեւ Զվարթնոց հնագիտական վայրին հարող շինությունների վիճակը, որոնց մասին եւս հաղորդում է Թորամանյանը. «Ամենուս հայտնի է, որ նոր շինված շենքերի վերջին մնացորդն է այժմյան թանգարան կոչվածը, որն արդեն կործանվելու վրա է, հետեւաբար ոչ մի շենք գոյություն չունի: Պահակների բնակած տեղերը հնագիտական մասեր կան, որոնք նույնպես արագ կերպով ոչնչանալու վրա են, նույնիսկ մարդկային բնակության հատկացված լինելու միակ պատճառով... Ջեմ հաշվում պատերի վրա գոյացած մրոտությունները եւ զզվելի կեղտոտությունները, որոնք բնավ չեն մաքրվելու, մինչեւ նրանց անճոռնի ծածկույթները վերացնելը, անձրեւն ու արեգակը միայն կարող են այդ ապականությունները մաքրել ժամանակի ընթացքում: Հետեւաբար, Զվարթնոցի անհետաձգելի կարիքներից մեկն է անմիջապես պահակների համար նոր բնակարաններ պատրաստել՝ ավերակներից միանգամայն հեռու: Զվարթնոցի համար նույնքան անմիջական պահանջ է պահակների հատուկ բնակարանները, ինչպես բեկորների եւ առարկաների համար շինվելիք նպատակահարմար թանգարանը» (անդ):

Այդուհանդերձ, Աշխարհբեկ Քալանթարի միջամտությամբ, խմբին հաջողվում է մշակութային արժեք ներկայացնող հնությունների կարեւոր մասը տեղավորել «անցյալ տարվան որբերուն բնակած տեղերը, որպես պահեստ», իսկ մնացածները փոխադրելու համար անհրաժեշտ էին հատուկ արկղեր, «որպեսզի լցնենք մեջը, եւ մնան, մինչեւ որ կջոկենք կարեւորները անկարեւորներից եւ կցուցակագրենք կանոնավոր թվահամարներով՝ առաջիկային մեր ունենալիք թանգարանին մեջ զետեղելու համար: Ուստի խնդրում եմ, որ Բաղալի հետ ուղարկեք սնդուկներ եւ մի հատ էլ կողպեք, որ դուռը փակենք», ասվում էր Թորամանյանի նամակում (անդ, թ.10): Եվ կրկին անվանի ճարտարապետը Քալանթարից խնդրում էր՝ իրենց ֆինանսական օգնություն տրամադրել. «Բաղալի հետ ուղարկեցեք 18 ռուբլուց ոչ պակաս, 10-12 օրվա ծախսերի համար: Գոնե մինչեւ մեր նախագահի վերադարձը պատրաստած ունենանք այդ կարեւոր աշխատանքը», - ավարտում էր իր զեկույցը Թ. Թորամանյանը (անդ):

Իհարկե, Թորամանյանի նման գիտակ մարդու գնահատականները եւ առաջարկները չէին կարող անհետեւանք մնալ: Հնագիտական վայրի կայացումը համարելով առաջնահերթ կարեւորության խնդիր՝ Աշխարհբեկ Քալանթարը քաջ գիտակցում էր, որ ֆինանսական խնդիրների լուծումից է կախված կատարվելիք աշխատանքների արդյունավետությունն

ու ընթացքը: Չնայած պետական սուղ միջոցներին՝ նա կարողանում էր միջոցներ հայթայթել արշավախմբի տնտեսական կարիքները հոգալու համար: Մեջբերում ենք Թորոս Թորամանյանին ուղղված՝ Աշխարհբեկ Քալանթարի 1924 թ. մայիսի 3-ի նամակից. «Ուղարկում եմ... փետրվար ամսի՝ Ձեր կենսաթոշակը՝ 30 ռ. (երեսուն), եւս 18 ռ. (տասն եւ ութ ռուբլի) Ձեր աշխատանքների միջոցին անհրաժեշտ ընթացքի ծախքերի համար: Վերջինիս համար խնդրում եմ ուղարկեք ստացական: Ձեր մյուս ռոճիկի վճարումը առայժմ անհնար է, Լուսժողկոմատը ներկայումս ի վիճակի չէ այդ ռոճիկները տալու» (Անդ, թ.13): Քալանթարի նամակից պարզ է դառնում նաեւ, որ բացակայում էին անգամ առաջին անհրաժեշտության միջոցները, որոնց մասին եւս ստիպված էր հանձնարարականներ տալ Թորամանյանին. «Ուղարկում եմ նաեւ երեք մեծ սնդուկ՝ հնութիւնների համար... Հին կողպեքն ուղարկեցեք, որ բանալի չինել տանք: Բահ եւ բրիչի մասին ընկ. Յաղուբյանն (լուսժողկոմատի պատասխանատու՝ Կ. Բ.) ասաց, որ Զվարթնոցում կան եւ թող լինեն Ձեր տրամադրության տակ: Ուղարկում եմ նաեւ թուղթ եւ ծրարներ: Ես կաշխատեմ, որքան հնարավոր է, ռոճիկների հարցը արագացնել: Տեսնենք՝ երբ կհաջողվի ստանալ: Շատ ցանկալի է, որ հենց միանգամից կազմեք եւ ուղարկեք այնպիսի ցուցակ, որը կհամապատասխաներ մեր պահանջներին: Ինչ որ է, բացի ցուցակից կազմվելու է նաեւ արձանագրություն, որի մեջ պետք է հիշված լինի նաեւ նորակառույց շենքերի ներկա դրության մասին: Եվ այս բոլորը որքան շուտ, այնքան լավ, որպեսզի... կարողանանք պաշտոնապես վերջացրած համարել: Մնացյալ հարցերի մասին խորհրդակցելու համար կաշխատեմ ինքս գալ, երբ հաջողի»,- ավարտում է իր նամակը Աշխարհբեկ Քալանթարը (անդ):

Արշավախումբը մանրամասն տեղեկացնում է կատարված աշխատանքների եւ հանդիպող դժվարությունների մասին: Այդ հաղորդումները հետագայում վերլուծության էին ենթարկվում Քալանթարի ու Թորամանյանի կողմից, եւ միայն դրանից հետո կազմվում էր հնագիտական վայրի վկայականը: Իսկ հաղորդումները բավականին հանգամանալից ուսումնասիրություններ էին եւ, որ կարեւորն է, ներկայացվում էր հնագիտական վայրի իրական վիճակը. «Գտնվածը մի հնձան է, քառակուսի 1 մ. 80 սմ. կողմերով, նախապես արդեն կիսավեր, այժմ էլ փորփրելով բոլորովին քայքայվել է, բայց բարեբախտաբար քիչ մասն են փորել: Մնացած մասերը փորելը արգելեցի, թեեւ մեծ բան չեմ հուսար գտնել, բացի հնձանի մանրամասնություններեն: Արդեն երեւում է, որ նախա-

պես այդ ավերակը մի փոքր բլրակի տակ էր ամփոփված: Սակայն դեզը եւ շրջակա ուրիշ մնացորդներ ցույց են տալիս, որ մի ժամանակ, այդ տեղերը, ներկայիս տարիներին, մի քառասուն կյանք է եղել եւ թերեւս նոր ապացույց՝ հին Վաղարշապատին շատ մոտ լինելուն», - ասվում էր արշավախմբի հաղորդումներից մեկում (անդ, թ.16): Իսկ դժվարություններն ամեն քայլափոխի էին:

Դժվարություններից մեկն էլ տեղի գյուղացիների անհարգալից վերաբերմունքն էր հնագիտական աշխատանքների հանդեպ. անտեղյակ լինելով տվյալ վայրի հնագիտական արժեքին՝ նրանք կատարում էին գյուղատնտեսական աշխատանքներ, որոնք ուղղակիորեն խանգարում էին արշավախմբի գործունեությանը. «Զվարթնոցում՝ տաճարի արեւմտյան կողմը՝ արտաքին աստիճաններից քիչ հեռու, ծիրանիների պարտեզին մեջ, բանջարանոցը ջրելու համար կապված ջուրը առաջի գիշեր անակնկալ կերպով բացել է մի խոր հոր՝ մոտավորապես մեկ մետր լայնությամբ եւ չորս մետրեն ավելի խորությամբ: Թե ի՞նչ բան է սա, առայժմ չի կարելի հասկանալ, մինչեւ որ չմաքրվի շուրջը եւ մեջը, սակայն այդ հետաքրքրական երեւույթը պարզելու համար ոչ մի տարրական միջոց չունենք: Մենակ Բաղալով չեմ կարծում, որ նպատակիս հասնեմ, տեսնենք, եթե փող ստացվի, կաշխատեմ մի երկու մշակ վարձել եւ մաքրել տալ: Կարծեք ամեն ինչ նույնն է՝ վերաբերմունքը դեպի հնագիտական աշխատանքները: Գրեթե մի շաբաթ եղավ, որ գործկոմը խոստացել է ինձ փոխադրական միջոց տալ Սեֆիաբադի (Եղեգնուտ) քանդվող մատուռը տեսնելու, բայց այսօր դեռ չի տված: Մանդատս գրպանումս լաց է լինում եւ ողբում է իր դժբախտ դրությունը» (անդ, թ. 20),- կարդում ենք Թորոմանյանի նամակներից մեկում: Ավելացնենք, որ Աշխարհբեկ Քալանթարի անմիջական ժառանգներ հանդիսացող Գուրզադյանների ընտանիքի կողմից մեզ տրամադրվեց նմանատիպ մանդատի օրինակը ձեռագիր վիճակում. այնտեղ գրված է. «Տրվում է սույն մանդատը Հայաստանի հնագիտական կոմիտեի ներկայացուցիչներ ընկ. Աշխարբեկ Քալանթարին, ճարտարապետ Թորամանյանին եւ Ս. Տ. Հակոբյանին առ այն, որ նոքա մեկնում են Էջմիածնի գավառում հնագիտական աշխատանքներ կատարելու, ուստի առաջարկվում է բոլոր շրջգործկոմներին եւ գյուղխորհուրդներին՝ ցույց տալ ամենալայն աջակցություն, այն է՝ տրամադրել գիշերելու հարմարություն, փոխադրական միջոցներ, ուղեկցողներ եւ այլն: Վերջով հիշվածը հաստատվում է ստորագրությամբ եւ կնիքով: Էջմիածնի գավառական գործադիր կոմիտեի փոխնախագահ

(ստորագրություն) 19 օգոստոսի 1924 թ., Վաղարշապատ»: Մեր կարծիքով՝ Թ. Թորամանյանի կողմից հիշատակածը հենց այսօրինակ մանդատի մասին է եղել[11]*:*

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ Աշխարհբեկ Քալանթարը հնությունների պահպանության կոմիտեի անունից հատուկ շրջաբերականով դիմում է տեղական մարմիններին՝ հոգ տանելու իրենց գյուղերի ենթակայության սահմաններում գտնվող եւ պատմամշակութային արժեք ներկայացնող վայրերի պահպանության մասին՝ հետագայում անհրաժեշտ միջոցառումներ անցկացնելու համար: Շրջաբերականի հետ միասին Աշխարհբեկ Քալանթարը գյուղական խորհուրդներին է ուղարկում նաեւ հնությունների պահպանության կոմիտեի կանոնադրությունն ու այդ մասին ՀՍԽՀ լուսժողկոմատի հրապարակած հատուկ դեկրետը: Մեր ձեռքում է Աշտարակի շրջանի Օհանավան գյուղի խորհրդի արձանագրությունը, որում մասնավորապես ասվում էր. «6 սեպտեմբերի 1924 թ.: Ղեկավարությամբ Զվարթնոցի հայր Խաչիկի, մենք՝ Օհանավանքի գյուղխորհրդի նախագահ Գեղամ Ղուկասյանս եւ հողկոմի անդամներ Գեղամ Թորոսյանս եւ Մնացական Վարդանյանս, ուսումնասիրելով Խորհրդային Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի կանոնադրությունը եւ լուսժողկոմատի դեկրետը եւ շրջագայելով մեր գյուղի հնագիտական վայրերը, այն է՝ Օհանավանքի ավերակները եւ գերեզմանատունը, Սերջալլի (Սերկեւլի) գյուղի ավերակները, Կարմիր վանքի ու Լուսավորիչի Անապատի ավերակները, որոշեցինք հատկացնել մեծ վանքի հնությունների պահպանության գործի համար վանքի հյուսիսային կողմի գերեզմանատունը՝ յուր վրայի ծառուտներով... Սերջալլի գյուղի ավերակները՝ տարածությամբ երեք դեսյատին, հետեւյալ սահմաններով. արեւելքից՝ Քասախ գետի ձորը, արեւմուտքից՝ Սերջալլիի հին ճանապարհը, հյուսիսից՝ մինչեւ Գրիգոր Աստվածատրյանի... գերեզմանատունը» (անդ, թ. 21):

Քաջատեղյակ Զվարթնոցի իրական վիճակին եւ համադրելով հաղորդած տեղեկությունները՝ Աշխարհբեկ Քալանթարը գտնում էր, որ կոմիտեի առաջին գործը պետք է լինի ամբողջապես չափագրել, գծագրել եւ կազմել Զվարթնոցի հատակագիծը՝ իր մանրամասն տեղեկագրով եւ լուսանկարներով: Իր հերթին, Թորամանյանը եւս գտնում էր, որ առանց կոմիտեի գիտության «...չենք կարող լուծում տալ այն կարեւոր հարցերին, այսինքն՝ թանգարանի եւ պահակների անկախ բնակարանների

[11] Ա. Քալանթարի արխիվ (տրամադրվել է Վ. Գուրզադյանի կողմից, 2015թ.):

չինության, ընդհանուր մանրամասն հատակագծի եւ տեղեկագրի պատրաստության... քանի որ կարեւոր ծախքերի հետ են կապված» (անդ, թ. 12): Եվ ընդհանրապես, արխիվային վավերագրերի ուսումնասիրությունը մեզ բերում է այն համոզմանը, որ Թ. Թորամանյանի նման գիտակ մարդու ընտրությունն այս գործում պատահական չի եղել: Աշխարհբեկ Քալանթարը լիովին վստահել է նրան՝ առաջին հերթին ստեղծված իրավիճակը գնահատելու եւ հնությունների իրական վիճակը ներկայացնելու համար: «Վերադարձիս անմիջապես կտեղեկացնեմ Ձեզ: Ըստ ամենայնի, շուտով կտեսնվինք ժողով նշանակելնիդ: Նախքան իմ երկար ճանապարհորդությունը, պետք է, որ Զվարթնոցի գործերը կարգավորած լինեն հենց այդ առթիվ, անհրաժեշտ է մի խորհրդակցություն հրավիրել շուտով... Երեւի երեկոյան ուղարկածս մի լուրը Ձեզ հասած կլինի՝ Զվարթնոցի սահմանների մոտ երեւան եկած մի հնության մասին: Զուզեցի լոկ լուրերի վրա հիմնված Ձեզ գրել, որը միշտ չափազանցված է լինում: Այսօր միայն հաջողվեց ինձ գնալ եւ տեղնուտեղը քննություն կատարել: Շտապում եմ արդյունքի մանրամասնությանը իրազեկ անել Ձեզ», - նշվում էր Թորամանյանի՝ Աշխարհբեկ Քալանթարին ուղղված հերթական նամակում (անդ, թ. 14,16):

Ահա այսպիսի ջանադիր աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ փոքր-ինչ առաջ տանել Զվարթնոց հնագիտական վայրի պահպանության գործը, թեպետ ամեն անգամ արշավախումբը հանդիպում էր նոր խոչընդոտների: Իսկ դժվարությունները, իրոք, շատ էին. «Զվարթնոցը երրորդ տարին է, ինչ որ Լուսժողկոմատի ձեռքին է: Անբարեմիտ մարդկանց շնորհիվ, Զվարթնոցում երեք տարվա ընթացքում ոչինչ չի ավելացել, այլ պակասել է,- նշում էր Զվարթնոց եկեղեցու քահանա Տ. Խաչիկը՝ Աշխարհբեկ Քալանթարին ուղղված զեկուցագրում: - Հնությանց խաչերը... մարդկանց ձեռքով կոտրատվել են եւ արձանագրությունները՝ վնասվել: Կալվածքի այգիների ծառերը անբարեմիտ հսկիչների շնորհիվ ոչնչանում են հետզհետե: Այս երեք տարվա ընթացքում երեք ծառ չեն տնկել, բայց երեք հազարից ավելի չորացրել ու կոտրատել են: Զվարթնոցը, իբրեւ իմ քրտնաթոր երկուց պտուղ, որբերի անկարող ձեռքերից առնելով՝ հատկացնում եմ Հնությանց պահպանության կոմիտեին, որպեսզի կալվածքը արտաքինով եւ հնությունները պահպանվեն, եւ կալվածքը անվտանգ մնա ոչնչանալուց եւ չորացվելուց: Այս տարի այգիների կեսը ջրվել է, իսկ մեծ մասը անջուր է մնացել եւ չորանալու վտանգի առաջ է կանգնած: Եթե այսպես շարունակվի, երեք տարվա ըն-

թացքում Զվարթնոցում այլեւս ոչ մի ծառ ու թուփ չի մնա»,- ավարտում է իր զեկուցագիրը Տ. Խաչիկ քահանան (անդ, թ. 23, շրջ.-26):

Աշխարհբեկ Քալանթարի հետեւողական աշխատանքի արդյունքում սերտ կապեր հաստատվեցին հնությունների պահպանության կոմիտեի եւ Էջմիածնի Մայր Աթոռի միջեւ: Գործին ձեռնամուխ եղան նաեւ մեծ թվով հայրենասեր հոգեւորականներ: Արդյունքում հնարավոր եղավ փոքր-ինչ մեղմել ֆինանսական կարիքները: Թ. Թորամանյանի՝ 1924 թ. սեպտեմբերի 5-ին Քալանթարին ուղարկած նամակներից մեկում կարդում ենք. «Մեծ ընկ. Աշխարհբեկ, ստացա Մեսրոպ եպիսկոպոսի ձեռքով ուղարկված 45 (քառասուն եւ հինգ) ռուբլին: Նամակիս մեջ կգտնեք լիազորագիրը: Օրվա կարեւոր հարցերից մեկը համարում եմ Զվարթնոցի դրության որոշումը» (անդ, թ. 31):

Հնությունների պահպանության կոմիտեի եւ Աշխարհբեկ Քալանթարի անմիջական ջանքերի շնորհիվ 1924 թ. դեկտեմբերի 24-ին ՀՍԽՀ լուսժողկոմատը կրկին վերահաստատում է Զվարթնոց հնագիտական վայրի պահպանությունը հնությունների պահպանության կոմիտեի տնօրինությանը հանձնելու իր որոշումը: Հասկանալի է, որ այդ որոշման հետ մեկտեղ պետք է լուծվեին նաեւ հնագիտական վայրի պահպանության հետ կապված ծախսերն ու այլ կարիքները: 1924 թ. դեկտեմբերի 24-ին ՀՍԽՀ լուսժողկոմատը այդ մասին հատուկ գրությամբ տեղեկացնում է հնությունների պահպանության կոմիտեին. «Կոմիսարիատը սկզբունքով դեմ չէ, որ Զվարթնոցի հնագիտական վայրը հանձնվի կոմիտեիդ՝ իր բոլոր շենքերով ու հողամասերով, բացի այդուց: Այն ժամանակ, երբ այդում կարիք կլինի պեղումներ կատարել, այն եւս կհանձնվի կոմիտեին, իսկ մինչ այդ կմնա Էջմիածնի Մանկական կոմունայի տրամադրության տակ: Լուսժողկոմի տեղակալ՝ Հ. Յաղուբյան» (անդ, թ. 8): Որոշումից անմիջապես հետո՝ 1924 թ. դեկտեմբերի 25-ին, հետեւում է Ա. Քալանթարի գրությունն՝ ուղղված ՀՍԽՀ Լուսժողկոմին, որում մանրամասն ներկայացվում էին Զվարթնոց հնագիտական վայրի ուսումնասիրության արդյունքները: Գրությունից պարզ է դառնում, որ հնությունների պահպանության կոմիտեն դեռ մեկ ամիս առաջ՝ նոյեմբերի 17-ի նիստում քննության էր առել այդ խնդիրը եւ որոշում էր կայացվել դիմել լուսժողկոմատին՝ «համապատասխան կարգադրության կոմիտեի իրավասությանը հանձնելու Զվարթնոցի հնագիտական շրջանն ամբողջովին՝ իր բոլոր հողերով, ծառերով, այգիներով եւ շենքերով: Զվարթնոցի հնագիտական շրջանը ընդգրկում է այն բոլոր կուրգանանման մնացորդները՝ շրջանաձեւ դասավորված, որ

պատկանում էին Վաղարշապատին եւ որի սահմաններն արդեն պարզված են հատուկ հանձնաժողովի կողմից» (անդ, թ. 33):

Հանրապետության լուսժողկոմատի այս որոշումից հետո, ինչպես ցույց է տալիս արխիվային վավերագրերի ուսումնասիրությունը, շատ խնդիրներ հետզհետե ստանում են իրենց լուծումը: Իհարկե, առաջին հերթին դա վերաբերում էր ֆինանսական խնդիրներին. «Համաձայն աշխատանքի կոմիսարիատի ընդհանուր որոշման՝ տեխնիկական աշխատակիցներին վերահաստիքավորելու համար, խնդրում եմ Զվարթնոցի մեր երկու պահապանի համար եւս կարգադրություն անեք՝ տալու իրենց հասանելիքը»,- նշվում էր Աշխարհբեկ Քալանթարի՝ լուսժողկոմատին ուղղված գրության մեջ (անդ, թ. 35):

Աստիճանաբար աշխատանքներն ընկնում են հունի մեջ, եւ արդեն ոչ միայն փոխվել էին հնությունների կոմիտեի նախորդ ամիսներին լուսժողկոմատ ուղարկած գրություններում տնտեսական կարիքները հոգալու մասին շեշտադրումները, այլեւ խոսվում էր նոր ծրագրերի մասին. «Ի լրումն մեր թ. 25 գրության (15. 12. 24 թ.) Զվարթնոցի վերաբերյալ հայտնում եմ, որ կոմիտեն արդեն ծրագրել է Զվարթնոցի տեխնիկական եւ գիտական պահպանության եւ ուսումնասիրության վերաբերյալ իր անելիքները եւ իր 17 հունիսի նիստում ընտրելով հատուկ հանձնաժողով՝ հանձնարարել է նրան մշակել այն եղանակները, որոնցով կարելի լիներ... իր իսկ միջոցներով կատարել ծրագրված աշխատանքները: Ահա այս նկատառումով խնդրում եմ Զվարթնոցի ամբողջ հնագիտական շրջանի հետ միաժամանակ կոմիտեի տրամադրության տակ դնել նաեւ նրա այգին, որի եկամուտը զգալի կերպով կթեթեւացներ մեր գործը Զվարթնոցում» (անդ, թ. 37): Ավելին, լուսժողկոմատին ուղղված մեկ այլ գրության մեջ ակներեւ է Աշխարհբեկ Քալանթարի ցուցաբերած հոգածությունը հուշարձանների պահպանության բնագավառի աշխատակիցների նկատմամբ՝ տակավին Կոմիտեի ֆինանսական սուղ պայմաններում Զվարթնոցի երկու պահակներին անհրաժեշտ հանդերձանքով ապահովելու գործում: Գրությունում կարդում ենք. «Սրանով ներկայացնում եմ իմ անունով թ. 591 պահանջագրով բաց թողած 80 ռուբլու հաշիվը, որ հատկացված էր Զվարթնոցի երկու հոգի պահակի համար որոշված հագնելիքն առնելու: Զվարթնոցի պահապաններ Բաղալ Սարգսյանի եւ Ասատուր Խաչատրյանի համար գնված է՝2 կիսամուշտակ Սիբիրական՝14-ական ռ. – 28 ռ. 06կ., փաստաթուղթ թ. 1, երկարավիզ կոշիկներ 22-ական ռ. – 44 ռ. փաստ. թ. 2, 2 գդակ մորթուց 4-ական

ռ. – 8 ռ.: Ընդամենը՝ 80 ռ. 06 կ.: Ծախսված է ընդամենը 80 ռ. 06 կ.: Կոմիտեի գիտ. քարտուղար՝ Աշխարհբեկ» (անդ, թ. 41):

Ինչպես հաստատում են արխիվային վավերագրերը, լուսժողկոմատն արդեն ինքն էր հետաքրքրություն ցուցաբերում Զվարթնոցում տարվող աշխատանքների հանդեպ եւ հնությունների կոմիտեին ուղղված գրությունում պահանջում էր աշխատանքային նոր ծրագիր եւ նախահաշիվ: Այդ ամենն, իհարկե, Աշխարհբեկ Քալանթարի հետեւողական եւ ջանադիր աշխատանքի արդյունքն էր, որն էլ իր հերթին գնահատանքի էր արժանանում Հանրապետության կառավարության կողմից. «25 ապրիլի 1925 թ., Երեւան: Զվարթնոցում պեղումների աշխատանքը շարունակելու համար առաջարկվում է Ձեզ՝ կազմել ծրագիր եւ նախահաշիվ: Աշխատանքի համար պետք է օգտագործել խաչիկ վարդապետին, որը իր ուժերը տրամադրելու պատրաստակամություն է հայտնում... Անհրաժեշտ է նախահաշիվը ներկայացնել մեկ շաբաթվա ընթացքում: Լուսժողկոմ՝ Ա. Մռավյան» (անդ, թ. 42):

Շուտով հնարավոր եղավ նաեւ ավարտել Զվարթնոցի սահմանների հաստատման գործը: Թ. Թորամանյանին ուղղված գրությունում Աշխարհբեկ Քալանթարը, նախագահի (Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ Ալ. Թամանյան - Կ. Բ) խնդրանքը փոխանցելով Թորամանյանին, լիազորում էր Կոմիտեի անունից հանդես գալ եւ մասնակցել հնավայրի սահմանների հաստատման գործընթացին. «Զվարթնոցի սահմանները որոշելու գործը իրականություն դարձնելու համար անհրաժեշտ ամեն կարգադրություն կանի հողժողկոմատի հողբաժնի վարիչ ընկ. Ավդալբեգյանը[12] անձամբ էջմիածնում, ուր նա լինելու է առաջիկա կիրակի օրը, ամսույս 13-ին: Այդ աշխատանքը կկատարվի շրջակա գյուղերի սահմանները որոշելու միջոցին, ուստի եւ առանձին նշանաքարեր մեր կողմից պատվիրելու կարիք չկա: Ընկ. նախագահը խնդրում է Ձեզ ներկա լինել կոմիտեի կողմից այդ աշխատանքների կատարելու միջոցին եւ ցույց տալ Զվարթնոցի սահմանները» (անդ, թ. 44): Հիշյալ աշխատանքները պատշաճ մակարդակով իրականացնելու համար Աշխարհբեկ Քալանթարը ՀՊԿ-ի կողմից համապատասխան գրությամբ դիմում է ՀՍԽՀ հողժողկոմատի հողային բաժնի վարիչ Ավդալբեկյանին. «Կոմիտես խնդրում է Ձեզ անել անհրաժեշտ կարգադրություն՝ Զվարթնոցի հնագիտական վայրի սահմանամերձ շրջաններում սահմանագծային աշխատանքներ կա-

[12] Թադեւոս Ավդալբեգյան (1885-1937 թթ.), հայ խորհրդային տնտեսագետ, հայագետ, հրապարակախոս, գրականագետ, պատմաբան եւ բառարանագետ:

տարելու միջոցին որոշելու նաեւ Զվարթնոցի սահմանները: Այդ աշխատանքների ժամանակ մեր կողմից ներկայացուցիչ լինի կոմիտեի անդամ ընկ. Թորամանյանը, որը եւ կտա անհրաժեշտ ցուցումներ հնագիտական շրջանի սահմանների վերաբերյալ» (անդ, թ. 45):

Ահա այսպիսի ծանր պայմաններում, հաղթահարելով բազում դժվարություններ ու խոչընդոտներ, Աշխարհբեկ Քալանթարի ծավալած եռանդուն գործունեության շնորհիվ հնարավոր դարձավ ոչ միայն պահպանել Զվարթնոցն իր հարակից տարածքներով, այլեւ ամուր հիմք ստեղծվեց նրա հետագա գիտական ուսումնասիրությունների եւ զարգացման համար: Այդ գործունեության արդյունքն էր նաեւ այն, որ Զվարթնոց հնագիտական համալիրը ներկայումս դարձել է Հայաստանի Հանրապետության պատմամշակութային ժառանգության իրական եւ արժեքավոր կոթողներից մեկը՝ հայոց պատմության, մշակույթի եւ ճարտարապետության անցյալը, ներկան եւ ապագան կամրջող կարեւոր հիմնասյունը:

РЕЗЮМЕ

В первые годы советской власти правительство Армении предприняло важные шаги по охране древних памятников, представляющих археологическую и художественную ценность. 18 июля 1923 г. был опубликован специальный декрет СНК Армении по этому вопросу: был создан Комитет по охране древностей, в состав которого вошли видные ученые и деятели армянской культуры. Заместителем председателя комитета был знаменитый арменовед и археолог Ашхарбек Калантар. В статье на основе нововыявленных архивных документов освещен весомый вклад Ашхарбека Калантара в создании и развитии историко-археологического заповедника Звартноц.

SUMMARY

In the first years of the Soviet power the Armenian government has taken important steps for the protection of ancient monuments of archaeological and art value. On July 18, 1923 was published the special decree of the government of Armenia on the matter; a Committee was formed for the protection of antiquities, which included prominent scientists and figures of Armenian culture. The deputy chairman of the committee was the famous armenologist and archaeologist Ashkharbek Kalantar. In the article based on newly uncovered archival documents is demonstrated contribution of Askharbek Kalantar in the creation and development of the historical and archaeological reserve Zvartnots.